# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ
## ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՊԱՐԻՍԻ

### 3.
### ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Suppl. no 83. — ՌՂԳ = 1644 :

Թուղթք՝ 238 ։— Մեծութիւն՝ 9×6 ։— Գրութիւն՝ միասիւն 6×3,7 ։— Տողք՝ 15–28 ։— Թերթք՝ 20, ուրաքանչիւրը 12 ։— Նիւթական մագաղաթ սքանչելի որակութեամբ, այնպէս որ գրիչը ստիպուած է մէկ քանի թղթերուն մէկ էջը միայն գրել, միւս երեսին վրայ գրելը անկարելի ըլլալուն համար, այսպէս՝ թղ. $64^{ա}$, $69^{ա}$ և $70^{բ}$ ։— Կազմ փայտեայ կաշեպատ, վրան զարդերով ։— Մագաղաթեայ պահպանակ երկու հատ սկիզբը և հատ մը վերջը, որ Աւետարանի հատուած մըն է (Մատթ. ԺԳ) մեծղիր մեսրոպեան տառերով ։— Հանգամանք լաւ, բայց լուսանցազարդերն և սկզբնագրերը գրողն այնչափ աճապարած է որ՝ իր գրածին չորնալուն առանց սպասելու թուղթը դարձնելէն շատ տեղ անոնք աւրուած և դիմացի երեսն տպաւորուած են ։— Պակաս թուղթ՝ թղ. 124 կտրած հանած են, որով կը պակսի Գլ. ՀԲ սաղմոսին սկիզբը մինչև համար 9. ուրիշ տեղ մըն ալ՝ թղ. 231՝ նոյնպէս հատու գործիքով մը կտրուած հանուած է, բայց բնագրին շարունակութիւնն առանց ընդհատելու ։ Պարապ են՝ թղ. $1^{ա}$, $25^{բ}$, $26^{ա}$, $64^{բ}$, $69^{բ}$, $70^{ա}$ և $232^{ա}$ ։— Գիր՝ մանր բոլորգիր, ամէնը մէկ

ճեռքից եղած և մաքուր ։ — Զարդագիրք՝ իւրաքանչիւր կանոնագլ-
խոց սկիզբն՝ ոսկեաւ, կապոյտ, կանաչ և կարմիր գոյներով են սկզբնատառք,
որոնք և թռչնագիր են, իսկ ուրիշ տեղեր՝ ոչ շատ կարմրաւ ընկերացու-
թեամբ կապուտ ։ — Սաղմոսս սկիզբն երեք տող ոսկով և երկու-
տող խունկով ։ — Խորագիրք՝ կարմրաւ ։ — Սկզբնագիրք՝ կարմ-
րաւ ։ — Խորանք՝ սկիզբը թղ. 2ա ։ — Կիսախորանք՝ կանոնագլխոց
սկիզբը վերոյիշեալ գոյներով և ոսկեաւ ։ — Լուսանցազարդք՝ բազ-
մաթիւ, նոյն գոյներով. տեղ տեղ դրուագներ և թռչուններ են, իսկ
թղ. 54ա մարգարէ մը պատկեր, և թղ. 58բ, 90ա, 150բ և 172բ մարգարէ-
ներ թռչուններ են ։ — Նկարք՝ սկիզբը թղ. 1բ, որ կը ներկայացնէ ըզ
Դաւիթ որ քնար կը զարնէ ։ — Ժամանակ՝ ՌՂԳ (=1644) ։ — Գր-
րիչ՝ Վրթանէս ։ — Տեղի՝ անյայտ ։ — Տէր՝ Պետրոս ։ — Յիշատա-
կագրութիւնք՝ պահպանակներուն վրայ, և թղ. 25ա, 63ա, 97բ,
123ա, 124բ, 152ա, 173բ, 200ա և 231բ ։

Մատեանս է 1° Սաղմոսարան, թիւ 2 րդ նման կանոնագլխոց
և գործոյից բաժանուած ։ Այս և ուրիշ կանոնագլխոց վերջը Գիշե-
րային ժամու վերջին կէսին մաղթանքներն են . նոյնպէս և ամե-
նէն վերջը՝ Դաւթի «կնքնագիր» սաղմոսը, Մանասէի աղօթքն, երից
մանկանց օրհնութիւնն են ։ 2° թղ. 232բ կայ Տօնացուցական գի-
րքէն նոտրգիր, և տող կը վերջանայ գիրքն ։

Յիշատակագրութիւնք . 1. Թղ. 152բ . բուն յիշատակարան.
«Մեղաւոր Վրթանէս . Գրիչ . յիշեցէք ի Քր. յՔս փրկիչն որ վրէ
Անեղ շնորհատուին եւ ատացի, Յիշողացդ . և յիշելոցս ։ Եկայք
օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք Անանանց(!), հանգիստն յիշողաց
արժանի լիցի ըստ զայն որ ասէ . Եկայք, օրհնեալք . Ամ---ն

Հայր մե՛ր։ Թվ. Ռ. Ղ. Գ.»։

2. Թղ. 123ա. «Զտառապետաւ վրթանիս գրիչս յիշել աղաչեմ։»

3. Թղ. 124բ. «ՎՐԹ գրիչս. յիշեցէք ի քս։ Թվ. ՌՂԳ.»

4. Թղ. 200ա. «Զանարժան. վրթանիս գրիչս. յիշեայ ի տր.»։

5. Թղ. 231բ. «Զտառապետաւ. վրթանիս գրիչս յիշեցէք. ի տր ած։ գրեցաւ. Ռ. ՂԳ. թվ. ին։»

6. Թղ. 25ա. տարբեր գրչով. «Պետրոսն այ ծառ»։

7. Թղ. 63ա. «Պետրոսն ծառայ այ»։

8. Թղ. 97բ. «Պետրոսս»։

9. Թղ. 124բ. «Պետրոսն այ ծառայ»։

10. Թղ. 152ա. «Պետրոսն այ ծառայ»։

11. Թղ. 173բ. «Պետրոսն ծառայ այ»։

12. Թղ. 200ա. «Պետրոսն այ ծառ»։

13. Մագաղաթեայ պահպանակներուն վրայ քանի մը տեղ. «Պետրոսն այ ծառայ», իսկ տեղ մը. «Էս սաղմոսարան Պետրոսինս»։

## 4.

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Anc. fonds n°3. — ՋՀԴ = 1525։

Թուղթք՝ 242։— Մեծութիւն՝ 15,5×10,8։— Գրութեան՝ միջոցն 11,5×7։— Տողք՝ 16։— Թերթք՝ 20. իւրաքանչիւրը 12։— Նիւթ՝ թուղթ հաստ խամքակեայ։ Կազմ՝ փայտեայ կաշեպատ, վրան զարդերով։— Մագաղաթեայ պահպանակ՝ չկայ։— Հանգամանք՝ շատ թղթերը ցեցակեր։ Կորսուած հանուած է թղ. 219։ Պակաս են՝ սկիզբէն և վերջէն քանի մը անհամար թուղթք, որոնք բնագրէն դուրս են։ Թղ. 227էն

սպիտակ գրին տեսակը անհամարելի կերպով փոխուած է։ Սաղմոս կէ-ի մէջ՝ «Լեառն այ լեառն այ լեառն պարարտ լեառն մածեալ և լեառն պարարտ» հատուածին համար տակի լուսանցքին վրայ կ'ըսէ. «Զիարդ ի հիւնի լեառն էր անոր համար խալտեցայ մեղայ»։— Գիր մէջակ բոլորգիր։— Զարդագիրք՝ կանոնագլխոց սկիզբին կարմիր, կապոյտ և շագանակագոյն. ոմանք թռչնագիր։— Խորագիրք՝ կարմիր։— Սկզբնագիրք՝ տան ընդ մէջ կարմիր և սև։— Խորանք՝ սկիզբը հատ մը կարմիր և կապոյտ գոյներով։— Կիսախորանք՝ կանոնագլխոց սկիզբին նոյն գոյներով։— Լուսանցազարդք բուսական ձևով և նոյն գոյներով. թղ. 198բ մարդագլուխ թռչուն մը կայ, որ գլխուն վրայ արքայական թագ մը կը կրէ։— Նկարք չկան։— Ժամանակ ՋՀԴ (= 1525) յունուար Է։— Գրիչ՝ Յովհաննէս աբեղայ և աշակերտն Մկրտիչ աբեղայ։— Ծաղկող՝ Գրիգոր։— Տեղի՝ Կ. Պոլիս։— Տէր՝ անյայտ։— Յիշատակագրութիւնք՝ թղ. 102ա, 174բ, 204ա և 242ա-բ։

Ամբողջ է Սաղմոսարան, միայն գլուխներու և կանոնագլխոց բաժանուած, որոնց վերջը կը պակսին գիշերային աղօթք։ Վերջն ալ են «Ինքնագիրն» սաղմոսն և «Խոստովանութիւն Մանասէի։ Տէր ամենակալ ևն»։

Յիշատակագրութիւնք։ 1. Թղ. 242ա-բ. գլխաւոր յիշատակարան. «Փառք ... Արդ գրեցաւ երգս շաբաթեան որ կոչի Սաղմոսարան՝ Ձեռամբ անարժան և անիմաստ Յովհաննէս աբեղայի, և կատարեցաւ ի մայրաքաղաքս Բուզանդիոյ. Ձեռամբ իմ աշակերտի Մկրտիչ աբեղայէ. ի թվ. ՋՀԴ յամսեանն յունվարի Է։ Եւ աղաչեմ զձեզ ով եղբարք թէ

հանդ սաղմոսելով կամ ընթեռնլով յիշեցէք · զգրողս սորայ · և զկազմարողս սոցին զՄկր. և զԳրիգ. · իյաղօթս ձեր · և դուք յիշեալ լիջիք ի Քէ : ամէն : Ո՛վ ո՛վ որք ընթերցողք (այսպէս) մի մոռանայք յիշել զմեզ որժամ հայիք ի սա զի Ած զձեզ յիշէ :»

2. Թղ. 204ա. բոլոր գրչին · «Զանարժան գրչակս յիշեա՛ ով որ ընթերցող · և Ած զքեզ յիշէ :»

3. Թղ. 204ա. վերի յիշատակարանին տակ շատ մանր բոլորգրով · «Զբազմամեղս զծաղկող տէրայ յիշայ(!)ով որ քահնայ էր որ արժանաւոր աղաւթք (այսպէս) և զձեզ յիշէ Քս Ած անպարտ ուրախութե ամէն · գրեցաւ սայ թվ ՌՀԴ. յունիս ԻԹ »:

4. Թղ. 174բ. դարձեալ շատ մանր բոլորգրով ծաղկողին գրչին · «Ով որ մանկունք նոր սիովսէ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր · զտէր Մկրտիչ եղբայրն իմ զԻլովացիս · ընդ նորին զանպիտան զԳրիգորս յիշեք · և դուք յիշեալ լինիք ի Քէ որ Տէրս ամէն»:

## 5.

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

### Anc. fonds nº 2. — ՌՃԼԱ=1682:

Թուղթք՝ 139 :— Մեծութիւն՝ 19,3X15 :— Գրութիւն՝ երկսիւն, իւրաքանչիւրը 13X4,5 :— Տողք՝ 19 :— Թերթք՝ 12, իւրաքանչիւրը 12 :— Նիւթ՝ թուղթ հաստ բամբակեայ :— Կազմ՝ փայտեայ կաշեպատ, վրան զարդերով :— Մագաղաթեայ պահպանակ՝ չկայ :— Հանգամանք՝ վերջին թերթերուն մէկ մասը զաւնաւած արտաքին պատճառով մը · իսկ ուրիշ երկարած է թղ. 137, բայց կը [illegible] [illegible] : Պարապ թողուած են վերջին երեք

Թուղթը, զոր վերջին սոսացողք՝ թերևս՝ լեցուցած են աղօթքով: Ուղղագրութեան մէջ շատ անգամներ անկէտ տեղը Օ գործածուած է փոխանակ աւ-ի, զ.օ. «դօւթ», «թագօր», «ամբարտօան», «փառաւորեմք» ևն: — Գիր՝ բոլորգիր: — Զարդագիրք՝ կարմիր և կապոյտ գոյներով են, Մեծագոյն մասը թռչնագիր: — Խորագիրք՝ սևով, իսկ գլխոց առաջին երկու տողք որդան կարմիրով և նարնջագոյն են: — Սկզբնագիրք՝ միշտ նարնջագոյն են: — Խորանք՝ սկիզբը (Թղ. 2ա) հատ մը կարմիր, կապոյտ և նարնջագոյն: — Կիսախորանք՝ կանոնագլխոց սկիզբները կարմիր և կապոյտ գոյներով միայն: — Լուսանցազարդք՝ նոյնպէս կարմիր և կապոյտ գոյներով միայն, տեղ տեղ թռչունք. Թղ. 33ա ծնրադիր սուրբ մը նկարուած, թղ. 136բ կանգուն սուրբ մը ձեռքը գիրք բռնած: — Նկարք՝ սկիզբը թղ. 1բ Դաւիթ Մարգարէն՝ անդուղա՝ ծնրադիր և գլուխը ոսկեզօծ թագ մը կը կրէ, ձեռքերը շեղ ի յառաջ բաց մը խնդրելու ձևով, թերևս կ'աղօթէ. գլխուն վերև երեք տուներ կը տեսնուին և երկինքին արևը: Թղ. 35ա գլխուն բոլորտիքն ոսկեզօծ լուսապսակով մարդ պատկեր մը, որ ձեռքը գիրք մը բռնած է. պատկերին ակը գրուած է՝ «սբ Գր Լ» այսինքն՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն: Այս երկու պատկերներուն մէջ ալ տիրող գոյներն են՝ որդան կարմիրն, նարնջագոյնը, կապոյտն ու կանաչը: — Ժամանակ՝ ՌՃԼԱ (=1682) «ազգօտարած. ձե.»: — Գրիչ՝ Երեմիա դպիր: — Ծաղկող և Տեղի՝ անյայտ: — Տէր՝ թերևս գրիչն: — Յիշատակագրութիւնք՝ թղ. 54ա, 99բ և թղ. 139բ:

Մատենս է Սաղմոսարան, նախընթացին նման կանոնագլխոց

բաժնուած, բայց գլուխներու բաժանմունք չեն նշանակը-ուած մասնաւոր թուականներով. կանոնագլխոց վերջը կան Գրիգորեանի աղօթք: Վերջը կան «Երգ Մար (եմայ) ած (ածնի)», «Անհնուր Զաքարիայ հօրն Յովհ.», «Աղօթք. Սիմէոնի. ծերունւոյ» վերնագրու միայն նօտրագիր, «Խոստովանութիւն Մանասէի Թգլին», «Աղօթք ան Ներս հայրապետ(ի): Հաստով խոստովանիմ և»:

Յիշատակագրութիւնք: 1. Թղ. 139բ. գլխոր յիշատակարան. «Փառք...: Արդ գրեցաւ սա ձեռամբ յոգնայ մեղ անիմաստ և անպիտան հող և մոխիր (այսպէս), մեղաւոր անարժան, Յերեմեայ դպիրս, ի թվ ՌԾԼԱ. ազգաստոսի. ժե. Արդ աղաչեմ զամեն որք հանդիպիք ամ կարդալով կամ օրինակելով յիշեցէք յիշեալ ընկեցէք աղէն:»

2. Թղ. 54ա. «Զանարժան գրչակս ըզ(...) երեմիայ ստուանեան. տիրացուիս աղաչեմ. յիշել ի Տր. և Ած յիշէ զձեզ: զծնօղս իմ և մերձաւ:»

3. Թղ. 99բ «Զանարժան գիրս ստուանեան, երեմիայ արգաւրս (այսպէս). և ծնօղս և մերձաւորս յիշեցէք յիշեա[լ]

Կ.Յ.Բ.

ԾԱԳՈՒՄՆ ՀԱՅ ՏԱՌԻՑ

Գրեց Տոք. Ն. Տաղաւարեան

Վիեննա, Մխիթարեան տպարան. 1895:

«ԱՐԵՒԵԼՔ» օրաթերթ.
Տարեկան գինն է 40 ֆրանք:
Direction du journal "Arévelk". Galata. Constantinople.

«ԲԻԶԱՆԴԻՈՆ» հայաթերթ.
Տարեկան գինը 40 ֆրանք:
Direction du "Puzantion". Bab-Ali Djadessi, No 23-25. Constantinople.